ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Էքսկուրսիաների նախապատրաստումը և անցկացումը աշխարհագրություն և ՀԵՊ առարկաներից

Հեղինակ՝ Մարինե Մովսիսյան

Բովանդակություն

Ներածություն----------3-4

Գլուխ 1 Էքսկուրսիաների նախապատրաստումը և անցկացումը աշխարհագրություն և ՀԵՊ առարկաներից

1.1 Էքսկուրսիան որպես ուսուցման կազմակերպման ձև, նրա նշանակությունը----------5-10

1. 2 Ուսուցչի դերը էքսկուրսիաների նախապատրաստվելու գործում----------10-12

1.3 Էքսկուրսիաների անցկացումը----------12-14

1.4 Հայրենագիտական էքսկուրսիաների էությունը----------14-16

1.5 Էքսկուրսիայի կազմակերպում դեպի Խոր Վիրապ, դրա կրթադաստիարակչական և հայրենագիտական նշանակությունը----------16-20

1.6 Էքսկուրսիայի կազմակերպման առաջարկ-ծրագիր դեպի Արարատի և Արմավիրի մարզեր----------20

Եզրակացություններ----------21

Օգտագործած գրականության ցանկ----------22

Ներածություն

Հետազոտական աշխատանքի թեմայի արդիականաությունը: Էքսկուրսիան այցելություն է դեպի տեսարժան վայրեր, թանգարաններ, պատմամշակութային հուշարձաններ: Այն ինչը աշակերտը տեսնում է, տպավորվում է նրա գիտակցության մեջ: Էքսկուրսիան կարող է վարել ուսուցիչը և էքսկուրսավարը, որոնց մեկնաբանմամբ աշակերտը սովորում է ճիշտ ընկալել իր տեսածը, ցուցադրածը: Էքսկուրսիաները շատ կարևոր են այն առումով, որ աշակերտը կարևորում է իրեն փոխանցված պատմամշակութային ժառանգությունը, դառնում է նրա կրողը և փոխանցողը հետագա սերունդներին: Էքսկուրսիաները նաև պատմամշակութային արժեքների պահպանման և դրանց անվտանգության ապահովման, հուշարձանների տարածքի անխաթարության միջոց են:
Շատ նպատակահարմար է աշխարհագրության, պատմության, ՀԵՊ դասերը անցկացնել մշակութային, պատմաճարտարապետական հուշարձանների,վանական համալիրների տարածքներում, ազգային ազատագրական պայքարի վայրերում:

Էքսկուրսիաները ունեն ***ճանաչողական*** մեծ նշանակություն:
Աշակերտները խորությամբ ճանաչում են իրենց հայրենիքը, ծննդավայրը, նրա ռազմավարական նշանակությունը, բնության գողտրիկ վայրերը, ծանոթանում են բնական հարստություններին, գիտության, մշակութային ձեռքբերումներին:

Էքսկուրսիաները ***նպաստում են*** քրիստոնեական արժեհամակարգի ամրապնդմանը, ազգային գաղափարախոսության: Դրանք ընդլայնում են աշխարհաճանաչողությունը, ձևավորում աշխարհայացք, հարստացնում են գիտելիքները, զարգացնում՝ հետաքրքրասիրություն, ինքնաճանաչում, ինքնագործունեություն և նախաձեռնողականություն, դաստիարակում են սեր դեպի բնությունը, հուշարձանները, դեպի ընկերը և մարդը, նպաստում են միջանձնային շփումներին: Աշակերտը դառնում է ավելի համարձակ, բանիմաց, առողջ և կոփվում է ֆիզիկապես:
Էքսկուրսիաները լինում են թեմատիկ և ընդհանուր: ***Ընդհանուր էքսկուրսիաները*** ավելի համընդգրկուն են, իսկ թեմատիկները կարող են լինել պատմական, արվեստագիտական, պատերազմապատմական, բնապատմական, իսկ ***թեմատիկ էքսկուրսիաները*** ունեն կոնկրետ ուղվածություն:

Ըստ անցկացման վայրի էքսկուրսիաները կարող են լինել բնակավայրի որևէ թաղամասում, թանգարանում, բնակավայրից դուրս, վանական համալիրներում, ամրոցներում, սրբավայրերում, արգելոցներում: Կարող են կազմակերպվել նաև արտադրական էքսկուրսիաներ որևէ գործարանում, հանքաշահագործման վայրում:

Կրթադաստիարակչական նպատակներով կարելի է կիրառել նաև ***ուսումնական էքսկուրսիան***: Ուսումնական էքսկուրսիա անցնելուց առաջ ուսուցիչը անց է կացնում թեմատիկ զրույց, քննարկում: Ուսումնական էքսկուրսիան ուսումնական գործընթացի կազմակերպման մի ձև է,պարապմունքի մի տեսակ:

Աշխատանքի նպատակը: Մեծացնել աշակերտների մոտ սերը հայրենիքի և հայրենի բնաշխարհի, մշակույթի և հոգևոր արժեքների նկատմամբ, զարգացնել աշխարհաճանաչողությունը և աշխարհայացքը:

Աշխատանքի հետազոտության օբյեկտը: Սուրբ Թադեոս և Խոր վիրապ վանական համալիրներ:Ծանոթանալ վանական համալիրների պատմությանը, նրանց պատմամշակութային արժեքներին: Խորացնել գիտելիքները եկեղեցական տոների վերաբերյալ:

Աշխատանքի խնդիրները: Աշխատանքի նպատակից բխում են հետևյալ խնդիրները.
1. Մեծացնել աշակերտների հետաքրքրությունները հայկական եկեղեցական տոների և ծիսակարգերի նկատմամբ:
2.Արժևորել կրոնը հայապահպանության գործում:

3.Սիրել և պահպանել հայրենի բնաշխարհը:

1.1 Էքսկուրսիան որպես ուսուցման կազմակերպման ձև, նրա նշանակությունը

Էքսկուրսիա բառը լատիներեն նշանակում է կոլեկտիվ ուղևորություն կամ կուլտուր լուսավորչական նպատակ: Վերջերս լայնորեն տարածվել է 14-րդ դարի սկզբին ինչպես արտասահմանում, այնպես էլ մեզ մոտ: Էքսկուրսիան արտադպրոցական դաստիարակության ճյուղերից մեկն է: Արտադպրոցական դաստիարակության նպատակը սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է, այն նպատակաուղղված է նրանց հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը...

1. Մուտքային էքսկուրսիաները, ինչպես նաև մուտքային դասերը, նախապատրաստում են ուսումնասիրելու այս կամ այն թեման: Այս էքսկուրսիաների ընթացքում հավաքվում են նյութեր, որոնք էլ հետագայում օգտագործվում են համապատասխան թեմայի ուսումնասիրման ժամանակ:

2. Ընթացիկէ քսկուրսիաներն անցկացվում են նոր թեմայի ուսումնասիրմանը զուգահեռ: Սա հատկապես իրականցվում է, երբ նոր նյութի յուրացումը հնարավոր չէ ապահովել բառային մտապատկերներով: Օգտակար է այն անցկացնել նյութի նախնական ուսումնասիրությունից հետո:

3. Ամփոփիչ էքսկուրսիաներն անցկացվում են թեմայի ուսումնասիրման ավարտին: Նպատակն է սովորեցնել երեխաներին ձեռք բերած գիտելիքները համեմատել արտադպրոցական դաստիարակությունն իրականացվում է մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, երաժշտական, նկարչական, արվեստի դպրոցների, ճամբարների և արտադպրոցական դաստիարակություն իրականացնող այլ կազմակեպությունների միջոցով:

էքսկուրսիաները կատարում են այն նույն գործառույթները, ինչ որ դասերը. ուսուցանող, դաստիարակող և զարգացնող:

Դրանք են՝

Կրթական

- Գիտելիքների խորացում, առանձին առարկաների և երևույթների մասին պատկերացումների կազմում
- Գործնականում տեսական գիտելիքների կիրառում

Զարգացնող

- Դիտումներ կատարելու կարողությունների զարգացում, ուշադրության, հիշողության ընդունակության զարգացում:

Դաստիարակչական

- Գեղագիտական դաստիարակություն
- Հայրենասիրության դաստիարակում, բնության նկատմամբ սիրո դաստիարակում

Մինչ դպրոցական համակարգի վերակառուցման մասին օրենքը, էքսկուրսիաները մեծ մասամբ անց էին կացվում բնությանը, արտադրությանը ծանոթացնելու նպատակով:Օրենքի հրատարակումից հետո ավելի քան երբևէ, բարձրացավ էքսկուրսիայի դերը: Այժմ ուսուցումը կյանքի հետ կապելու, դասավանդման մեթոդներն ու ձևերը կատարելագործելու և ակտիվացնելու նոր պահանջներից ելնելով՝ էքսկուրսիան դիտվում է որպես ուսուցման կազմակերպման մի յուրահատուկ ձև, որպես աշխարհաճանաչողական գիտելիքների հաղորդման միջոց: Գիտելիքի հաղորդումը կարելի է կատարել դաս- էքսկուրսիաների միջոցով՝ նկատի ունենալով , որ այդ ձևով յուրացումն ավելի կայուն ու խորն է լինում, իսկ դասն ավելի աշխույժ ու հետաքրքիր է անցնում:

ա) Էքսկուրսիայի անհրաժեշտության հոգեբանամանկավարժական հիմնավորումը:

Հիմք ընդունելով այն, որ օբյեկտիվ իրական աշխարհի ճանաչողությունը սկսվում է զգայությունից, ուսուցման պրոցեսում մեծ տեղ է տրվում էքսկուրսիային: Իրական աշխարհի զգայություններն ու ընկալումները համապատասխանորեն իմաստավորվում և վերամշակվում են մեր գիտակցության մեջ:Մեր աչքին միանում են մյուս զգայարանները և մտածողության գործունեությունը:Զննական ընկալումը հեշտացնում է աշակերտների գիտելիքների յուրացման պրոցեսը:Քանի որ աշակերտների մտածողությունը զարգանում է կոնկրետից դեպի վերացականը, ուստի զարգացման վաղ էտապներում նրանք մտածում են ավելի շատ պատկերներով, քան հասկացողություններով:Հասկացողությունները և վերացական գաղափարները սովորողի գիտակցությանն ավելի հեշտ են հասնում, եթե դրանք ամրապնդվում են կոնկրետ փաստերով, օրինակներով ու պատկերներով:Այսպես այլ ձևով է ընկալվում և մտապահվում առարկան կամ երևույթը ցուցադրմամբ, այլ ձևով՝ նկարագրությամբ:

Էքսկուրսիոն մեթոդը օգտագործվում է դպրոցական կյանքի տարբեր բնագավառներում և հետապնդում է ինչպես կրթական, այնպես էլ դաստիարակչական նպատակներ:

Էքսկուրսիան ուսուցչին հնարավորություն է տալիս կոնկրետ ու վառ փաստերի վրա երեխաներին ցույց տալ ուսումնասիրվող առարկաների ու երևույթների միջև եղած կապերը, պատճառի ու հետևանքի փոխկապվածությունը և մարդու վերաստեղծող ու վերաշինող ուժը:

Այս ամենը նպաստում են երեխաների մատերիալիստական աշխարհաճանաչողության ու դիտողականության զարգացմանը, նրանց մեջ խոր հետաքրքրություն են առաջացնում դեպի շրջապատը, ամրապնդում են նրանց գիտակցական կարգապահությունը, սեր են արթնացնում դեպի բնությունը, հոգատար վերաբերմունք են դաստիարակում շրջապատի ու ընդհանրապես հայրենի երկրի բնության նկատմամբ:

Ինչպես հայ մեծ լուսավորիչ-մանկավարժ Խ. Աբովյանն է նկատել՝(<<Երկերի լիակատար ժողովածու>>) բնությունն իր բազմապիսի առարկաներով ու երևույթներով, իր պես-պես գույներով ու ձայներով, դրանց միջև եղած պատճառահետևանքային զանազան կապերով, իր սքանչելի գեղեցկությամբ ու անկրկնելի ստեղծագործություններով ամենամեծ ուսուցիչն է, մի ուսուցիչ, որ ամենից հեշտ ու դյուրին ձևով, խոր ու կայուն կերպով սովորեցնում է մարդկանց բնությունը ճանաչել: Ահա թե ինչու ուսուցման պրոցեսում լայնորեն պետք է օգտագործել էքսկուրսիաները, որպես ուսուցման միջոց, որպես շրջապատի բնությունն ու հասարակությունը ճանաչելու, շրջապատի մասին ռեալ գիտելիքներ հաղորդելու եղանակ:

բ)էքսկուրսիայի կրթադաստիարակչական նշանակությունը:

Էքսկուրսիաները ընդլայնում են աշակերտների մտահորիզոնը, նրանց միտքը հարստացնում են նոր տպավորություններով, անմիջականորեն դիտել են տալիս այնպիսի առարկաներ ու երևույթներ, որոնք դպրոց բերել հնարավոր չէ, հետաքրքրություն են առաջացնում դեպի իրենց շրջապատի բույսերը, կենդանիները, մարդկային հասարակությունը և մարդու աշխատանքը բնության և հասարակության մեջ:

Էքսկուրսիաները բացառիկ կարևոր նշանակություն ունեն նաև երեխաների խոսքի զարգացման համար : Ինչպես հայ նշանավոր մանկավարժ Ա. Բահաթրյանն էր ասում. «Ուսուցման մեջ առաջինը և կարևորը դիտողականությունն է, երեխայի առաջին դիտողականությունները վարժեցնում են նրա զգայարանները, իսկ զգայարանն այն դուռն է, որով արտաքինը մտնում, թափանցում է ներքին աշխարհը, ինչ-որ չի անցնում զգայարաններով, նա առհասարակ չի մտնում հոգու մեջ, ուստի միշտ ուսուցման պրոցեսում նախ պետք է երևան գա գաղափարը, իսկ հետո՝ բառը: Միայն այդպես կարելի է դիտողականությամբ մշակել լեզուն, իսկ լեզվով՝ հոգին ու միտքը[1]»:Գրեթե նույն կարծիքն է հայտնել նաև ռուս մեծ մանկավարժ Ուշինսկին:Նա գտնում էր, որ խոսքը չի կարող զարգանալ առանց մտքի, իսկ միտքը զարգանում է, եթե մտքի, առարկայի մասին երեխան պարզ ու կոնկրետ պատկերացում ունի: Ու ոչ մի ձևով

հնարավոր չէ նոր բառերի յուրացումն այնքան կայուն դարձնել, որքան էքսկուրսիայի միջոցով, որովհետև այստեղ բառը կապվում է տվյալ հասկացության, իրի կամ երևույթի դիտման ու զննման հետ, դառնում է կոնկրետ ու որոշակի:

Էքսկուրսիան լավագույն նյութ է տալիս ոչ միայն բանավոր, այլև գրավոր խոսքի զարգացման ու մշակման համար:Փորձը ցույց է տալիս, որ աշակերտները ամենից ավելի հաջող շարադրություններ գրում են էքսկուրսիաների վերաբերյալ, որովհետև նյութի կոնկրետությունն ու տպավորությունների անմիջականությունը

Պետք է նկատել, որ էքսկուրսիայի ընթացքում ոչ միայն նախատեսված առարկաներն ու երևույթներն են դիտվում, այլ բազմաթիվ այլ նյութեր են հավաքվում (հերբարումներ ու հավաքածուներ կազմելու համար և այլն):

Էքսկուրսիաները բացառիկ կարևոր նշանակություն ունեն նաև դաստիարակչական տեսակետից: Դրանք երեխայի մեջ զարգացնում են ուշադրություն ու դիտողունակություն, մշակում են գիտակցական կարգապահություն ու կազմակերպվածություն՝ դպրոցից դուրս իրենց պահելու ուսուցչի կարգադրությունները ժամանակին, ճիշտ ու անթերի կատարելու ունակություն:

Էքսկուրսիաների միջոցով երեխան ծանոթանում է երկրի մակերևույթի ձևերին, զգում հայրենի բնության գեղեցկությունը և ամենից շատ սիրում ու գնահատում այն:Էքսկուրսիայի ժամանակ զարգանում է նաև երեխաների էսթետիկական ճաշակը, նրանք կարողանում են գեղեցիկը տեսնել ամեն տեղ՝ բնության մեջ, կյանքում և աշխատանքում:

Էքսկուրսիայի ընթացքում ձևավորվում են շատ բարոյական նորմեր՝ ընկերասիրություն, կոլեկտիվիզմ, փոխօգնություն և այլն:

Էքսկուրսիայի ժամանակ երեխաները ձեռք են բերում բնավորության այնպիսի գծեր ինչպիսիք են հաստատակամություն, համառություն, դժվարությունները հաղթահարելու կամք:

Էքսկուրսիայի ժամանակ բացահայտվում է աշակերտի բնավորությունը, նրա շատ ընդունակություններ ի հայտ են գալիս:

Էքսկուրսիայից ստացած տպավորությունները ավելի անմիջական են և պահպանվում են ավելի երկար: Եվ պատահական չէ, որ ասում են լավ է մեկ անգամ տեսնել, քան տաս անգամ լսել: Օրինակ՝ չորրորդ դասարանում երեխաների գիտելիքները ավելի կայուն

կդարնան, երբ էքսկուրսիայի ժամանակ իրենց աչքով տեսնեն և դրան զուգահեռ լսեն թե ինչ է գետի հունը, աջ և ձախ մասերը և այլն:

Էքսկուրսիայի ժամանակ շատ երևույթներ աշակերտները կարող են տեսնել, բայց չհասկանալ, այս գործում մեզ օգնության է գալիս ուսուցչի բացատրությունը, որը կարող է ինչպես նախորդել, այնպես էլ զուգակցել ու հաջորդել էքսկուրսիային:Գիտելիքների ընկալմանը հաջորդող էքսկուրսիան նպաստում է աշակերտների նախօրոք ստացած գիտելիքների ամրապնդմանը, իսկ թեմային նախորդող էքսկուրսիան հիմք է հանդիսանում նոր գիտելիքների ընկալման համար, աշակերտները նախնական տվյալներ են հավաքում այս կամ այն թեման յուրացնելու համար:

Ուսուցման պրոցեսում կարևոր նշանակություն ունեն նաև արտադրական էքսկուրսիաները: Այս կամ այն առարկաներից գիտելիքներ սովորելով՝ երեխաները ծանոթանում են (հատկապես ցածր դասարաններում) այն պարզ սարքերին , որոնք հիմք են հանդիսանում ամենաճշգրիտ ու ամենաբարդ մեքենաների ստեղծմանը որից ծնվում են ամենաբարդ արտադրական պրոցեսները:

Ուրիշ ոչ մի միջոց չի կարող աշակերտներին այնքան կոնկրետ պատկերացում տալ արդյունաբերության մասին, որքան արտադրական էքսկուրսիաները:Սրանց միջոցով է , որ աշակերտները կարողանում են գրքերում կարդացածը տեսնել արտադրության մեջ:

Չի կարելի երբեք էքսկուրսիայի անցկացմանը երկրորդական նշանակություն տալ, լրացուցիչ կամ ավելորդ աշխատանք համարել, դիտել որպես ուսումնական պրոցեսին օժանդակ միջոց:

գ)Էքսկուրսիայի ամփոփումը:

Ամփոփումը կարող է տեղի ունենալ ինչպես էքսկուրսիայի վայրում, այնպես էլ դասարանում՝ նայած էքսկուրսիայի բնույթին և ուսուցչի հետապնդած նպատակներին:Այն կարող է բանավոր զրույցի, հարց ու պատասխանի , պատմելու բնույթ կրել, կարող է նաև հավաքած նյութերի(հերբարիումներ) ուսումնասիրության ձևով անցկացվել:

1.2 Ուսուցչի դերը էքսկուրսիաների նախապատրաստվելու գործում

Առհասարակ ընդունված է,որ դասին լավ նախապատրաստվելը այն լավ անցկացնելու հիմնական նախապայմանն է. Սա մեծապես վերաբերում է նաև էքսկուրսիայի անցկացմանը: Էքսկուրսիայի կազմակերպման ժամանակ ուշադրություն պետք է դարձնել հատկապես նրա 3 հիմնական փուլերի վրա՝

- ***Նախապատրաստման***
- ***Անցկացում***
- ***Ամփոփում***

Էքսկուրսիաները կազմակերպելուց առաջ ճիշտ կլինի,որ ուսուցիչը ընտրի էքսկուրսիայի տիպը, համապատասխան տեսական նյութին, որովհետև դա նպաստում է նրա լավ նախապատրաստմանն ու անցկացմանը, այլ նաև նրա արդյունավետությանը ,որովհետև այն նպատակային անցկացնելու ամենահիմնական ճանապարհներից մեկն է, և դրան պատշաճ պետք է վերաբերվել: Նպատակահարմարը էքսկուրսիան անցկացնել դասերից հետո կամ էլ առանձին օր, որպիսի այն մյուս դասերին չխանգարի: Էքսկուրսիայից հետո սովորաբար երեխաները երկար ժամանակ աշխույժ տրամադրության մեջ են լինում, և հնարավոր չի լինում նրանց ուշադրությունը կենտրոնացնել դասի վրա:Ուստի պետք է ուսուցիչը այնպես կարողանա դասավորել,որ էքսկուրսիայից հետո աշակերտները այլևս դասեր չունենան:

Ուսուցիչը պետք է սահմանի էքսկուրսիայի կոնկրետ նպատակը և օբյեկտը, որպեսզի ըստ այդմ էլ պարզ լինի,թե էքսկուրսիայի ընթացքում երեխաները ինչ գիտելիքներ են ստանալու, ինչ նյութեր ուսումնասիրելու կամ հավաքելու,ինչ գործնական աշխատանքներ են կատարվելու և ինչի համար, երբ և ինչպես է անցկացվելու էքսկուրսիան:Երբ այսքանը արդեն ուսուցչի համար պարզ է և նա գիտի,թե ուր է էքսկուրսիա տանելու, երբ և ինչ նպատակով, կարող է որոշակիորեն պատկերացնել, թե ինչ հարցերի շուրջ հարկ կլինի խոսել էքսկուրսիայի ժամանակ, ինչ գիտելիքներ պետք է տա աշակերտին և ինչ չափով, ուստի ըստ այդմ էլ նա հաշվի կնստի ինքն իր հետ, թե նա ինչ լրացուցիչ տեղեկություններ և ուսումնասիրություններ անցկացնելու կարիք ունի:

Յուրաքանչյուր էքսկուրսիայի նպատակը որոշելուց հետո պարտադիր կարգով ուսուցիչը պետք է վերստին մանրամասնորեն ուսումնասիրի այդ թեման, թարմացնի ու լրացնի իր գիտելիքները այդ թեմայի վերաբերյալ, որպեսզի կարողանա երեխաներին բավարար չափով տեղեկություններ տալ տվյալ օբյեկտի մասին, ճիշտ ու պարզ պատասխաններ տալ էքսկուրսիայի ընթացքում ծագած հարցերին:Նյութերի ուսումնասիրությունից հետո ուսուցիչը պետք է կատարի էքսկուրսիայի վայրի ընտրություն, որոշի ընթացքը և դեպի էքսկուրսիա տանող նպատակահարմար ճանապարհը:

Այսպիսի նախնական ուսումնասիրությունից հետո ուսուցիչը կարող է կազմել էքսկուրսիայի պլանը, որը կարևոր նշանակություն ունի հետագա աշխատանքների ճիշտ կազմակերպման համար:

Պլան կազմելիս պետք է հաշվի առնել հետևյալ հիմնական հարցերը.

1.Էքսկուրսիայի թեման

2.Այն գիտելիքների համառոտ շարադրանքը, որ երեխաները պետք է ստանան էքսկուրսիաների ընթացքում:

3.Էքսկուրսիայի ընթացքն ու հաջորդականությունը, էքսկուրսիայի ընթացքում շոշափվող հիմանական հարցերը, աշակերտներին տրվելիք խմբային կամ անհատական աշխատանքի առաջադրանքները:

4.Էքսկուրսիայի վերջում անցկացվող ամփոփիչ զրույցի համառոտ բովանդակության շարադրումը:

5.Էքսկուրսիայի կահավորումը՝ հանդերձանքը, գործիքները և այլն:

Էքսկուրսիան անցկացնելուց մեկ-երկու օր առաջ ուսուցիչը աշակերտներին պետք է բացատրի էքսկուրսիայի նպատակը, նրանց անելիքները: Այս բացատրությանը զուգահեռ աշակերտները ուսուցչի կողմից ստանում են անհատական կամ խմբային հանձնարարություններ:

Ուսուցչի նախապատրաստական գործունեության մեջ է մտնում նաև կարգապահության պահպանման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները: Ուսուցիչը պետք է կարողանա աշակերտների մեջ սերմանել այն գաղափարը, որ էքսկուրսիան նույն դասն է, պարզապես այլ պայմաններում,ուստի կարգապահական պահանջները բնության գրկում մնում են անփոփոխ:Եվ քանի որ աշակերտի անկարգապահ պահվածքը կարող է դառնալ ձախողված դասի և էքսկուրսիաի պատճառ, ուստի այս կետը երբեք չի կարելի աչքաթող անել:

Էքսկուրսիայի նախապատրաստական աշխատանքների մաս է կազմում նաև դպրոցի տնօրինությունից թույլտվություն ստանալը, վերջիններս էլ հաստատում են ուսուցչի կազմած պլանը:Սա անհրաժեշտ է ոչ միայն դպրոցի ներքին կարգ ու կանոնի պահպանման, այլև միջոցառումների՝ դասերի վերադասավորման, փոխադրականի ապահովման, ուսուցչի օգնական նշանակելու համար: Այս ամենը կարևոր նշանակություն ունի էքսկուրսայի լավ անցկացման համար, չի կարելի երբեք դրանք անուշադրության մատնել:

1.3 Էքսկուրսիաների անցկացումը

Էքսկուրսիան սկսվում է նրանով, որ էքսկուրսիայի վայրում ուսուցիչը հավաքում է բոլոր աշակերտներին, հիշեցնում էքսկուրսիայի նպատակը, տրված առաջադրանքները, աշակերտի անելիքներն ու պարտավորությունները:

Էքսկուրսիայի ժամանակ ուսուցիչը աշակերտների մեջ պետք է հետաքրքրություն առաջացնի դեպի օբյեկտը, որպեսզի աշակերտը անհրաժեշտ ուշադրությամբ դիտի այն:

Ուսուցչի հիմնական խնդիրն է նախատեսված օբյեկտի դիտման, զննման ճիշտ կազմակերպումը:Դրա համար ամենից առաջ աշակերտների մեջ հետաքրքրություն պետք է առաջացնի դեպի տվյալ օբյեկտը,որպեսզի նրանք անհրաժեշտ ուշադրությամբ ու լարվածությամբ դիտեն այն: Այս նպատակով նա աշակերտներին այնպիսի հարցեր պետք է առաջադրի,որոնց պատասխանը գտնելու համար նրանք հարկադրված լինեն ամբողջ էքսկուրսիայի ընթացքում ուշադրությամբ դիտել ուսումնասիվող օբյեկտը, առարկան, երևույթը, փորձեն այն ընկալել բազմակողմանի, համեմատել այն այլ օբյեկտների, առարկաների, երևույթների հետ համեմատելու,գտնելու դրանց էական ու երկրորդական հատկանիշները, դրանց առանձին մասերն ու համադրման ձևերը:

Էքսկուրսիաների անցկացման ընթացքը կարելի է բաժանել փուլերի, և յուրաքանչյուր փուլի համար աշակերտին տալ առանձին հանձնարարություն: Առաջին հանձնարարությունը

ստուգելուց հետո կարելի է տալ հաջորդ հանձնարարությունը: Այսպիսի մոտեցումը օբյեկտի զննությունը դարձնում է ավելի մատչելի ու կոնկրետ,աշակերտները միանգամից իրենց ուժերից վեր հանձնարարություններ չեն ստանում: Էքսկուսիայի անցկացման այս ձևը ավելի արդյունավետ է ցածր դասարաններում: Ցածր դասարաններում նաև ցանկալի է կազմակերպել գավառագիտական էքսկուրսաներ(դեպի թանգարան,կենդանաբանական ու բուսաբանական այգիներ, պատմական հուշարձաններ, սելեկցիոն կայաններ):Վերջինիս մեթոդական տարբերությունն այն է,որ այսպիսի վայրերում ավելի շատ նմուշներ կարելի է տեսել քան անհրաժեշտ է, ուստի ուսուցիչը նախապես պետք է ծանոթանա առկա նմուշներին, որպիսի էքսկուրսիայի ընթացքում կարողանա այնպես կազմակերպել ընթացքը, որ երեխաները հնարավորինս քիչ ավելորդ նմուշներ տեսնեն:

Էքսկուրսիայի ընթացքում կարելի է նախապես պայմանավորվել էքսկուրսավարի հետ, ասել նրան ասվելիք նութին անհրաժեշտ խորության, ծավալի մասին, և նրան թողնել ընթացիկ բացատրությունները: Բայց նաև բացատրությունները կարող են մատուցվել հենց ուսուցչի կողմից,եթե իհարկե նա նախօրոք շատ լավ ուսումնասիրել է նյութը, ծանոթացել ցուցանմուշներին և դրանց դասավորությանը:

Յուրաքանչյուր ցուցանմուշի մասին աշակերտին պետք է տեղեկություն տալ առանձին-առանձին: Ընդ որում այն կարելի է անել 2 ձևով. Բացատրել այնուհետև թուլ տալ աշակերտներին զննել դրանք, կամ հակառակը՝ թույլ տալ, որ ուսումնասիրեն, ապա տալ անհրաժեշտ մեկնաբանությունը:

Էքսկուրսիայի ընթացքում աշակերտների մեջ թեմային չվերաբերվող բազմաթիվ հարցեր կարող են առաջանալ, որոնք երբեմն լուրջ դժվարություններ կստեղծեն ուսուցչի համար, մանավանդ եթե նա սկսնակ է: Ուսուցչի հիմնական խնդիրներից մեկն էլ պետք է լինի այն,որ նա աշակերտներին պահի էքսկուրսիայի հետապնդած նպատակների շրջանակներում՝մի կողմ թողնելով երկրորդական կարգի կամ բուն նյութին չվերաբերվող հարցերը, որոնք քննարկման կարող են ենթարկվել էքսկուրսիայից հետո:

Ուսուցիչը պետք է պատասխանի միայն այն հարցերին, որոնց պատասխանները կլինեն ընկալելի և կկարողանան ազդել աշակերտի մոտ աշխարհաճանաչողության զարգացմանը: Իհարկե այդ հարցերի մեջ կհանդիպեն այնպիսիները, որոնք աշակերտը ինքնուրույն կարող է լուծել, լրացուցիչ դիտարկումների և հետազոտությունների միջոցով: Նման

դեպքում պետք է թողնել, որ աշակերտը ինքը գտնի իրեն հետաքրքրող հարցի պատասխանը:

Նպատակահարմար է արդյունաբերական և գյուղատնետեսական արտադրությանը,քաղաքի և գյուղի կյանքին վերաբերող գործնական բնույթի էքսկուրսաիները անցկացնել գործարանում, էլեկտրակայանում, բանջարանոցում, այգում և այլ ձեռնարկություններում: Եվ սրանք բնականաբար իրենց բնույթով տարբերվում են դեպի բնություն կազմակերպվող էքսկուրսաիներից:

Այսպիսի դեպքերում աշակերտը ծանոթանում է նյութական բարիքների ստեղծման մեխանիզմներին և ընթացքին, զրուցում է արտադրությունում աշխատող մարդկանց հետ, սովորում է հարգել աշխատանքի մարդկանց, հարգանքով վերաբերվել այն բարիքներին,որն ինքն օգտագործում է, և հաճախ անգամ գաղափար չի ունենում թե ինչ դժվարությամբ են դրանք արտադրվել:Իսկ երբեմն էլ աշակերտները անձամբ մասնակցում են արտադրության գործընթացին:Այսպիսի էքսկուրսիաները ունեն թե ճանաչողական և թե դաստիարակչական բնույթ: Եվ նմանատիպ էսկուրսիաները սովորաբար թողնում են դրական մեծ ազդեցություն:

1.4 Հայրենագիտական էքսկուրսիաների էությունը

Հայրենագիտական աշխատանքի ձևերը բազմազան են: Որպես հիմնական ձև օգտագործվում է էքսկուրսիան, նաև դիտումները, փորձը, ճանապարհորդությունները և արշավները: Հայրենագիտական աշխատանքների կազմակերպման լավագույն ձևը էքսկուրսիան է:Բնության մեջ անցկացվող էքսկուրսիաները լայն հնարավորություն են տալիս օգտագործել հայրենագիտական նյութերը:Ոչ մի առարկայի համար էքսկուրսիան այնքան մեծ նշանակություն չունի,որքան աշխարհագրության համար:Աշխարհագրական էքսկուրսիաների միջոցով է արտահայտվում բնության պատճառահետևանքային կապերը,բացահայտվում է բնության ամբողջականությունը,հասարակություն- բնություն փոխազդեցությունը,որը աշակերտների մոտ նախադրյալներ է ստեղծում աշխարհայացքի ձևավորման համար: էքսկուրսիաները ուսումնական գործընթացի բաղկացուցիչ մասեն

հանդիսանում:Հայրենագիտական աշխատանքների կազմակերպման դեպքում հայրենի բնակավայրերի ուսումնասիրությամբ զբաղվում են աշակերտները՝ուսուցչի ղեկավարությամբ:Եթե դիտարկենք, որ հայրենագիտությունը նպատակ է, ապա էքսկուրսիան՝ նպատակին հասնելու միջոց է:

Մեծ վիպասան Ռաֆֆին գրում է«Ով չի ճանաչում իր հայրենիքը,նա չի կարող ճշմարտորեն սիրել այն»: Էքսկուրսիայի ընթացքում հայրենի բնության գրկում կատարվող աշխատանքները համարժեք են քիմիայի և ֆիզիկայի գծով լաբորատոր աշխատանքներին:Բնությունը,ինչպես նաև աշխարհագրական կահավորված հրապարակը հանդիսանում են աշխարհագրական լաբորատորիա:Երբեմն էքսկուրսիա են անվանում դպրոցի և նրա բակի սահմաններից դուրս կատարվող աշխատանքները:

Յուրաքանչյուր էքսկուրսիա պետք է ունենա նպատակ՝ծանոթացնելու և ուսումնասիրելու հայրենի բնությունը,այնտեղ ապրող մարդկանց,նրանց տնտեսական գործունեությունը և այլն:

Էքսկուրսիան հետաքրքիր դարձնելու համար կարելի է աշակերտների միջոցով կազմել երթուղային քարտեզ,որում պայմանական նշաններով նշվեն աշխարհագրական առանձին օբյեկտները,պատմական հուշարձանները և այլն:Հայրենագիտական աշխատանքի ձևերից են դիտումները: Կարելի է նախապես պայմանավորվել տուրիստական կազմակերպության հետ,պարզաբանել արշավների խնդիրները և նպատակները:Կարելի է արշավ կազմակերպել՝ բարձրանալով Արագածի լանջեր,Ամբերդի ավերակներ,Բյուրականի Աստղադիտարան, Քարի լիճ, դիտել սառցադաշտային ծագման տրոգները, կրկեսները և այլն: Էքսկուրսիան այցելություն է դեպի տեսարժան վայրեր, թանգարաններ, բնություն՝ուսումնական, կրթամշակութային նպատակներով:
Էքսկուրսիաների միջոցով երեխան ծանոթանում է երկրի մակերևույթի ձևերին, զգում հայրենի բնության գեղեցկությունը և ամենից շատ սիրում ու գնահատում այն: Էքսկուրսիայի ժամանակ զարգանում է նաև երեխաների էսթետիկական ճաշակը, նրանք կարողանում են գեղեցիկը տեսնել ամենտեղ՝ բնության մեջ, կյանքում և աշխատանքում:

Հայրենագիտական աշխատանքներ կազմակերպելու համար առաջին հերթին անհրաժեշտ է կողմնացույց, մետր,երկրաբանի մուրճ, խոշորացույց, տոպրակներ, լուցկու տուփեր, պիտակներ, տետր, գրիչ, մատիտ, լուսանկարչական սարք, շշեր, դանակ, փոքրիկ



կացին,հարթաչափ և այլն: Վերջիններիս ընտրությունը կախված է թե ուր ենք գնում և ինչ նպատակով:

Էքսկուրսայի վայրի ընտրությունը կախված է առաջադրված խնդրի բովանդակությունից:Եթե հայրենագիտությունը հիմնականում տարվելու է ֆիզիկական աշխարհագրության գծով,ապա պետք է ընտրել անպիսի տարածք,որտեղ ցայտուն արտահայտված լինեն մակերևույթի ձևերն ու ֆիզիկաաշխարհագրական երևույթները:

Իսկ եթե հայրենագիտական աշխատանքները արվելու են տնտեսական աշխարհագրության գծով,ապա պետք է ընտրել տնտեսական արտադրական առանձին օբյեկտ կամ վարչական միավոր:

Բայց նաև հայրենագիտական աշխատանքները իրականացվում են նաև կոմպլեքսային ձևով,այսինքն ուսումնասիրել հայրենի բնակավայրի բնական պայմանները և բնակչության զբաղմունը,տնտեսական կյանքը: Այս դեպքում ավելի նպատակահարմար է ընտրել որևէ վարչական միավոր:

1.5 Էքսկուրսիայի կազմակերպում դեպի Խոր Վիրապ վանք ,դրա կրթադաստիարակչական և պատմամշակույթային նշանակությունը:

Գաղտնիք չէ, որ հոգևոր դաստիարակությունը կրթական գործունեության անբաժան, և կարևոր մասն է: Այն ունի ռազմավարական լուրջ նշանակություն, քանի որ մեր կամքից անկախ մենք հայտնվել ենք տարբեր քաղաքակրթությունների խաչմերուկում: Հետևաբար, մեր ազգային-հոգևոր նկարագրին և մեր դավանած հիմնարար արժեքներին սպառնացող բոլոր մարտահրավերներին առավել արդյունավետ դիմակայելու համար մենք պարտավոր ենք մեծ ուշադրություն դարձնել մատաղ սերնդի հոգևոր, ռազմահայրենասիրական,

հայրենագիտական, բարոյական, գեղագիտական, ֆիզիկական և քաղաքացիական դաստիարակությունը:

Այդ գործընթացում առանձնահատուկ նշանակություն ունեն պետական, ազգային և եկեղեցական տոներին, հիշատակի օրերին, զոհված ազատամարտիկների, նշանավոր գործիչների հոբելյարներին նվիրված միջոցառումները, էքսկուրսաիները:

Իմ առաջ ունենալով այս խորհուրդը հունիսի 18-ին հայ առաքելական եկեղեցին տոնում է Սուրբ Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից, տոնին ընդառաջ նախաձեռնեցի կազմակերպել էքսկուրսիա դեպի Խոր Վիրապ վանական համալիր: Էքսկուրսիան իրականացվեց Նորաբացի միջնակարգ դպրոցի VI-XII դասարանների աշակերտների հետ: Օգտվելով մեզ ընձեռնված հնարավորությունից կազմեցի էքսկուրսիայի երթուղի, այն էր՝ քաղաք Մասիս, այցելություն Մասիս քաղաքի եկեղեցի, այնուհետև Խոր Վիրապ վանական համալիր:

Հասնելով Մասիս քաղաք այցելեցինք նորակառույց Սուրբ Թադեոս եկեղեցի, որտեղ աշակերտները վերհիշեցին եկեղեցու հիմնադրման պատմությունը, նշելով որ, 1991թվականին Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից ընտրվել է եկեղեցու կառուցման վայրը, և նույն տարում կատարվել է Եկեղեցու հիմնարկեքը: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2003 թվականին՝ բարերար Հրանտ Վարդանյանի նախաձեռնությամբ և ֆինանսավորմամբ: 2015 թվականին եկեղեցու կառուցումն ավարտին են հասցրել նրա որդիները՝ Միքայել և Կարեն Վարդանյանները: Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ կառուցված այս եկեղեցին կոչվել է Սուրբ Թադեոս առաքյալի անունով: Սուրբ Թադեոս եկեղեցին օծվել է Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ՝ 2015 թվականի հոկտեմբերի 4-ին:Անմիջապես եկեղեցու մուտքի առջև տեղակայված է մոմավառության ընդարձակ սրահը: Եկեղեցու բակում է գտնվում Հրանտ Վարդանյանի հիշատակի աղբյուրը: 2016 թվականի ապրիլի 24-ին եկեղեցու բակում բարերարներ Միքայել և Կարեն Վարդանյանների նախաձեռնությամբ տեղադրվել է խաչքար՝ նվիրված Մեծ եղեռնի սրբադասված 1,5 միլիոն նահատակների հիշատակին: Խաչքարը կերտված է մեկ ամբողջական տուֆ քարից (քանդակագործ՝ Արտակ Համբարձումյան):

Անչափ ուրախալի էր այն հանգամանքը, որ սովորողները բավական լավ տեղեկացված էին եկեղեցու հիմնադրման պատմությանը:

Շարունակելով էքսկուրսիան հասնելով Փոքր Վեդի գյուղ ուխտը շարունակեցինք ոտքով , ճանապարհին սովորողները ներկայացնում էին իրենց ունեցած տեղեկությունները վանքի և քրիստոնեության որպես պետական կրոն հռչակման պատմության մասին: Այնուհետև անրադարձ կատարվեց օրվա խորհրդին ՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի՝ Խոր Վիրապից դուրս գալու հիշատակության օրվան , որը սկիզբ դարձավ հայոց մեծ դարձի:

Հասնելով եկեղեցի տեր Աբրահամը սովորողների ծանոթացրեց սուրբ Հռիփսիմյան եւ Գայանյան կույսերի պատմությանը: Նշվեց որ, Սուրբ Գրիգոր Լուսավորչի **ելքը Վիրապից** Հայ եկեղեցու մեծ տոներից է, որ հիշատակվում է Հռիփսիմյան եւ Գայանյան տոներին հաջորդող շաբաթ օրը: Տոնական այդ օրը բոլոր եկեղեցիներում մատուցվում է Սուրբ Պատարագ: Սուրբ Գրիգոր Լուսավորչի՝ Խոր Վիրապից ելնելու տոնի հաջորդ օրը Հայ եկեղեցին նշում է Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքով Կաթողիկե Սբ. Էջմիածնի հիմնադրման տոնը:

Մինչ էքսկուրսիա գնալը կազմեցի վերջինիս իրականացման համար իմ առաջ դրված նպատակները և ծրագիր,որի միջոցով առաջնորդվելու էի էքսկուրսիայի ընթացքում: Ստորև այն ներկայացնում եմ ձեզ:

Էքսկուրսիայի եռամիավոր նպատակ.

Ուսուցողական՝ Սովորեցնել Սուրբ Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից տոնին իրականացվող եկեղեցական ծիսակարգի ընթացքը:

Զարգացնող՝ Համեմատել Սուրբ Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից **եկեղեցական ծիսակարգի անցկացման նմանությունները և տարբերությունները մյուս եկեղեցական տոների հետ:**

Դաստիարակչական՝ Ծանոթացնելով Սուրբ Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից **եկեղեցական տոնին, ունենալով խորհուրդ մեծացնել սովորողների մեջ եկեղեցական տոների նկատմամբ ուշադրությունը և կարևորել նրա դաստիարակչական նշանակությունը:**

Քայլեր	*Ի՞նչ է պետք անել*	*Ե՞րբ է պետք դա անել*	*Որտե՞ղ պետք է դա*	*Ինչպե՞ս պետք է դա անել*

			անել	
1.	Ստանալ թույլտվություն տնօրինությունից:	**24.10.2022թ.**	**Դպրոց**	**Անհատական և թիմային աշխատանքի պլանով առաջնորդվելով, համագործակցել դպրոցի տնօրինության և ուսուցչական անձնակազմի և համաձայն մշակված քայլերի, խմբի ղեկավար մեթոդիստի աշխարհագրության ուսուցչի և Նորաբացի եկեղեցու հոգևոր առաջնորդ Տեր Թեոդիկի հետ կազմակերպել ուսուցողական-ճանաչողական էսկուրսիա-միջոցառումը:**
2.	Համապատասխան տեսական նյութ տրամադրել մասնակիցներին:	24.10.2022թ.	**Դպրոց**	
3.	Կարգավորել տրանսպորտային հարցերը:	23.10.2022թ.	**Դպրոց**	
4	Պայմանավորվել ծնողների, հոգևոր առաջնոդի և աշխարհագրության ուսուցչի հետ:	23.10.2022թ-22.10.2022թ	**Դպրոց**	
5.	Ընթացքում փորձել նյութերը ուսուցչի հետ:	12.06.2022թ-13.06.2022թ	**Դպրոց**	
6.	Զբաղվել ընթացիկ կազմակերպչական հարցերով:	12.06.2022թ-16.06.2022թ	**Դպրոց**	
7.	Գնալ Մասիս քաղաք, այցելել Սուրբ Թադեոս եկեղեցի, այնուհետև այցելել Խոր Վիրապ վանական համալիր, վերադառնալ Նորաբաց:	**18.06.2022թ.**	**Քաղաք Մասիս, Խոր Վիրապ վանական համալիր**	

Էքսկուրսիայի ամփոփում

Վերադառնալու ճանապարհին աշակերտների հետ զրույցի միջոցով ամփոփեցի էքսկուրսիան, նպատակ ունենալով պարզել արդյունավետությունը: Աշակերտները տպավորված էին, և կարողանում էին պատասխանել իրենց ուղղված հարցերին: Սա արդեն խոսում է,այն մասին, որ էքսկուրսիան եղել էր արդյունավետ, տպավորել էր աշակերտներին

և լիահույս եմ, որ նրանց մեջ կարողացել էի սերմանել սեր դեպի հայրենիքը, հավատքը, մշակութը:

1.6 Էքսկուրսիայի կազմակերպման առաջարկ-ծրագիր դեպի Արարատի և Արմավիրի մարզեր

Ստորև ներկայացնում եմ էքսկուրսիայի ծրագիր դեպի Արարատի և Արմավիրի մարզեր, հաշվի առնելով մի շարք դրական և ուսուցողական հանգամանքներ, որոնք կնպաստեն աշակերտի գիտելիքների պաշարի ավելացմանը, կսերմանեն հայրենասիրություն, կնպաստեն հայրենիքի, նրա պատմությանն ու աշխարհագրությանը ավելի խորը ծանոթանալուն:

Այդպես օրինակ ***Արարատի և Արմավիրի մարզերը ՀՀ արևմտյան դարպասներն են ունեն ռազմավարական և գյուղատնտեսական մեծ նշանակություն:***

1) Նաև այստեղ են մղվել հայոց ազատագրական պայքարի բազմաթիվ հերոսական մարտեր:
2) Այն հարուստ է պատմաճարտարապետական և բնության հուշարձաններով (Մեծամորի բրոնզեդարյան մետաղաձուլարանը, Վանի թագավորության քաղաք Արգիշտիխինիլիի ավերակները, Էջմիածնի վանական կառույցները, Զվարթնոց տաճարի ավերակները, Խոր վիրապի վանք, ճարտարապետական հուշարձանը): Այս գաղափարը հնարավորություն կտա շեշտադրելու հայրենասիրական դաստիարակությունը,սեփականը սիրելու գնահատելու և անսասան պահելու գաղափարախոսությունը:
3) Այստեղ են աճում հայկական արևաշող ծիրանը, խաղողի բազմաթիվ տեսակներ , մրգերի և բանջարեղենների բազմաթիվ տեսակներ:

Իսկ այս գաղափարը կօգտագործվի սովորողին հայկական բնաշխարհին ծանոթացնելու համար, ինչպես նաև կամրապնդվեն գիտելիքները աշխարհագրական լանդշաֆտների, ըստ կլիմայական գոտիների դրանց փոփոխության և ըստ այդ այնտեղ աճող մշակաբույսերի տեսակային կազմի մասին:

Եզրակացություն

Վերը նշվածից եկա հետևյալ եզրակացության.

Էքսկուրսիայի էությունը կայանում է բացատրությամբ՝ ցուցադրության, շրջագայության մեջ: Այն ինչը աշակերտը տեսնում է, տպավորվում է նրա գիտակցության մեջ: Էքսկուրսիան կարող է վարել ուսուցիչը և էքսկուրսավարը, որոնց մեկնաբանմամբ աշակերտը սովորում է ճիշտ ընկալել իր տեսածը, ցուցադրածը: Էքսկուրսիայի ժամանակ ուսուցիչը աշակերտների մեջ պետք է հետաքրքրություն առաջացնի դեպի օբյեկտը, որպեսզի աշակերտը անհրաժեշտ ուշադրությամբ դիտի այն: Հայրենագիտական աշխատանքների կազմակերպման լավագույն ձևը էքսկուրսիան է: Բնության մեջ անցկացվող էքսկուրսիաները լայն հնարավորություն են տալիս օգտագործել հայրենագիտական նյութերը: Խոր Վիրապ էքսկուրսիան նպաստեց աշակերտների հայրենասիրական ոգու բարձրացմանը, նրան զուգահեռ նրանց մեջ սերմանեց սեր և հարգանք մեր կրոնի և կրոնական ծիսակարգերի նկատմամբ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Տեր-Գրիգորյան ,Գործնական աշխատանքները բացատրական ընթերցանության դասերին, Երևան , 1963 թ.

2.Ա.Բալյան,Լ.Գ.Սեղբոսյան,Դպրոցականներիգեղագիտական դաստիարակությունը,Երևան, 1979թ.

3.Գ.Ավետիսյան,խմբ.՝Ռ.Հովսեփյան,Հայրենահիտականաշխատանքներըդպրոցում, Երևան,1976թ.

4. Գ.Ե.Ավագյան,ՀայկականՍՍՀաշխարհագրությանուսուցմանմեթոդիկա,Երևան,1983թ.

5. Հ.Թութունջյան,Կրտսեր դպրոցականի հոգեբանական առանձնահատկությունները, Երևան, 1962թ

6. Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, Երևան, 2014թ.